

ԵՐԵՄՈՒՆԵՐԿՈՒ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կես տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиси, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԵՐ

Դեկտեմբերի 1-ին, ցերեկվայ ժամը 3-ին հանգիստ վախճանվեց Թանգոյան եկեղեցու քահանայ

ՏԵՐ ԵՍԱՅԻ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԸ

Հանգուցեալի որդիները—Նիկողայոս և Կապիտան Յարութիւն Եսայեանները Իրանց կանանցով—Սօֆիա Յարութիւնեանը և Նատալիա Միքայելեանը. դուստրները—Եղիսաբէթ Եսայեան Եգորեանը, Մարիամ Եսայեան Սոսեանը և Աննա Եսայեան Բաշբէնդի-Մէլիքեանը իրանց ամուսններով խորին վշտով ծանուցանում են ազգականներին և ծանօթներին շնորհալի սիրով իրանց հօր մահը և խոնարհաբար խնդրում են շնորհ բերել հոգեհանգստին ուրբաթ օրը, դեկտեմբերի 3-ին, երեկոյան ժամը 6-ին, յուզարկաւորութեանը, որ կայանաւոր է հանգուցեալի տնից (Սէմեօնովսկի փողոց) դէպի Թանգոյան եկեղեցին՝ շաբաթ օրը, դեկտեմբերի 4-ին, ցերեկվայ ժամը 2-ին, և թաղման պատարագին—կիրակի օրը, դեկտեմբերի 5-ին, Թաղումը լինելու է Կոնկիայի գերեզմանատանը:

Մնացական Գարրիկեան Բալանթարեանց, Տէր-Դէրբէ քահանայ և Մարթա Գէորգեան Մէլիքեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր կնոջ, իսկ վերջինները իրանց դստեր՝

ԱՍՏՂԻԿ ՏԵՐ-ԳԵՈՐԳԵԱՆ ՔԱՆԱԿԱՐԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Շուշովեան տնից 30-ին Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, դեկտեմբերի 5-ին Շուշովեան եկեղեցում Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիմարկութիւնների պակասութիւնը.—Ներքին Տեսչութիւնը. Էլիսաբէթ Միքայելեան հրամարդ. Մամուլ. Նկարչական ցուցահանդէս. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սկսում ենք պաշտպանվել:

ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱԿԱՐԱՐԵԱՆԸ

Թիֆլիսի, մասամբ Բաղուր և Բաթումի մէջ կան մի քանի հասարակական հիմարկութիւններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՆ

ՍԿՈՒՄ ԵՆԻ ՊԱՏՏՊԱՆՎԵԼ

III

Այս Էջերում «Մշակ» էլ շատ անգամ առիթ է ունեցել կանգ առնել համալսարանային այս ծանր հարցի վրա: Խոստովանում ենք, մեր անմիջապէս, ողբերի արժանի իրականութիւնը մեզ յոռետես, կապիտան քաղաքութիւն է հաղորդել: Եւ ուրիշ լին կարելի էր սպասել: Խոսել հասարակական հարցերի մասին, արժանի համայնական ցաւերը բուժելու միջոցները, տարիներով լինել այսպէս և տարիներով էլ կրիայի բայիցով շարժվող մի ստան կհանգի մէջ տրոբիլ—սա մի վիճակ է, որ ակամայ պիտի ստիպէ չը հաւատալ մեր ինքնաճանաչութեան, մեր կենսունակութեան: Եւ մենք չենք հաւատում, թէ հասարակական այս չափազանց կարեւոր հարցի մէջ մեր հոգեւորականութիւնը կարող է նախաձեռնող հանդիսանալ, ուստի աւելի ծնողների գիտակցութեան էինք դիմում, կարծում էինք թէ նրանց պէտք է լաւ պատրաստել, որպէս զի իրանց աղջիկների ամուսնութեան ժամանակ փեսաների գիւրջը, ընդունակութիւնների հարցերի հետ միասին մի հատ բոլորական վկայականի հարցն էլ պարտաւորական դարձնեն: Այժմ փաստ է, որ նախաձեռնութիւնը հոգեւոր իշխանութիւններին է պատկանում: Կենսաբ, գուցէ առաջին անգամ մեզանում, մի խոշոր դրոշմ հանդիսացաւ, հարկադրելով իր պահանջների համեմատ օրէնսդրական բայիք անել:

Մենք ողջունում ենք այդ խոշոր գործը: Այսպիսի յաղթանակները միայն այն կարող են ցոյց տալ, որ բարեփոխներով չի կհանք չէ կարող մեզ համար այնքան սարսափելի լինել, չէ կարող մեզ ճնշել, տափակացնել իր անհաւոր ծանրութեան տակ:

Հարկաւոր է փոքր ինչ մօտենալ այն կեան-

նարկութիւններ, որոնք զբաղված են գիտնական կամ բարեգործական նպատակներ իրագործելով: Իսկ մեր միւս կենսոյններում, մասնաւոր գաւառական փոքր քաղաքներում շատ քիչ հիմարկութիւններ գոյութիւն ունեն և եղածներն էլ մի տեսակ օտարոտի բացառութիւն են կազմում:

Ճիշդ է, նայն իսկ մեծ քաղաքներում բացված հասարակական հիմարկութիւնները լիովին չեն ծառայում իրանց կոչմանը. բայց և այնպէս նրանք, իբրեւ փոքրիկ կենսոյններ, խմբում են իրանց

բն, որ այդպիսի մի համակրելի բայ առաջնորդ:

Ամեն ամառ Կովկասեան հանքային ջրերում հաւաքվում են տաճեակ հազարներով հիւանդներ: Մարդկային տառապանքների մի ամբողջ ծով է ծփում այդ կեղեցիկ բուժարկերում, մանաւոր նրանցից երեք մէջ—Պատիգորսկում, Փոկէղիօթում և Էսէնտուկիում: Ամբողջ երեք ամիս եկուր ահագին բազմութիւնը հեղուկ գործում է, այս ու այն կողմ է շտապում, միշտ զբաղված է, միշտ հոգեւոր ունի, միշտ ժամացոյցին է նայում, ճշգրտաբանութեան խիստ պահանջներից մէկին չէ ուղղում անտան անել: Տեսնում էք ամեն մէկին և իմանում էք, որ մարդը կարծի է իր սովորական կեանքի ընթացքից, եր պարագայութեանցից և վազել է այստեղ բժշկութիւն գտնելու համար:

Այդ բժշկութիւնը խիստ մի բարդ բան է մասնաւոր այնտեղ, հանքային ջրերում, ուր բնութեան տուած բազմաթիւ բուժիչ յարմարութիւններին գիտութիւնը միացրել է իր ձեռք բերած միջոցները, իր ահագին բժշկական հիմարկութիւնները: Եւ ամեն տեղ դուք տեսնում էք հիւանդների մի զարմանալի եւ ունեւոր, ինքնագոհ գործունէութիւն: Նրանք ժամերով սպասում են բժիշկների ընդունաւորանքներում, իրանց գեղատուներով լցնում են դեղատները, խմբում են հանքային ջրերի աղբիւրների մօտ, մարտիրոսական համբերութեամբ դիմում են հանքային ջրերի լողաբանների ահագին շինութիւնների մէջ, ջրաբուժարաններում և ամեն մի հիմարկութեան մէջ, ուր այս կամ այն միջոցը կարող է թիթեակցել նրանց գրութիւնը:

Քանի քանի տեսակ հիւանդութիւններ են մարդկային խեղճ կազմուածքի մէջ արժանանք բռնում: Անհնարին է հաշուել Հասարակական այգիներում, վոկալներում, վազոններ մէջ, մի խօսքով ամեն տեղ, ուր եկուրներ համախմբում կայ, դուք անդադար լսում էք խօսակցութիւններ «Կուրսի» մասին, այսինքն՝ ինչպէս է գնում բժշկութիւնը, ինչ

շուրջը մարդկանց և տարիներ ընթացքում իրագործում որոշ նպատակներ: Նրանք թէ հող են պատրաստում ապագայ աւելի մեծ գործունէութեան համար: Նայն հիմարկութիւնների մէջ և թէ նպատակում են հասարակական ինքնագործութեան և նախաձեռնող լինելու ընդունակութիւնների զարգացմանը:

Մի բժշկական, գիւղատնտեսական, տեխնիկական, ժուժկայութեան, մանուկների խնամատարութեան, աղքատախնայ, ուսանողների օգնութեան, մանկաբարձական ընկերութիւն, որքան թող գործում լինի ներկայումս, այնու ամենայնիւ նա իրագործում է մի որոշ ծրագիր, որը տարիների ընթացքում կամաց-կամաց արարում է արդիւններ, ծառայելով որոշ բարոյական նպատակի:

Մենք շատ անգամ ենք քննադատել մեր հասարակական հիմարկութիւնների թերութիւնները և արձանագրել գործողների թիւը և անկատար գործունէութիւնը, մենք ամենին գոհ չենք այն համեմատաբար փոքր արդիւնքներից, որ նրանք տալիս են իւրաքանչիւր հաշուէտարին: Սակայն մեր խօսքը այժմ հիմարկութիւնների մէջ նկատված պակասութիւնների մասին չէ, այլ հիմարկութիւնների գոյութեան նշանակութեան մասին է: Եթէ այսօր թող է հիմարկութիւնը, նա կարող է վաղը ուժեղանալ, եթէ այսօր նրա մէջ բուն են դրել ծրի և անհոգ անձեր, վաղը կարող են նրանց փոխարինել եռանդուն և անձնուէր մարդիկ, որոնք կը հանեն հիմարկութիւնը քնած գրութիւնից և կը տան նրան թարմութիւն և կենդանութիւն: Բայց այդ անելու համար, անհրաժեշտ է, որ հիմարկութիւնները իրանք գոյութիւն ունենան,

հիւանդութիւնը են բժշկվում, ինչպէս են բժիշկները, ինչպէս է ջրերի վարչութիւնը և այլն: Հիւանդ լինել, իբրեւ հիւանդ խօսել, զանգառվել կամ գոհութիւն յայտնել—սա հանքային ջրերի ամառային ազգաբնակչութեան համար խօսակցութեան, դատողութիւնների, հոգեւոր ամենազինե առարկան է, որ պատվում է մի կերպ պարծանքով, մի տեսակ ինքնահաւանութեամբ: Սրտաբացութիւնը կատարելով է: Եւ բոլորովին անսովոր բան է, որ մի ջահել, լաւ հագնված տիկին վոկալի բազմութեան մէջ իր ծանօթին պատմում է, թէ ինչ գրութեան մէջ է իր աղբիւրների կամ փայծաղի հիւանդութիւնը, իսկ մի ուրիշը վազոնի մի ծայրից բարձր խօսակցում է մի ուրիշի հետ իր ստամոքսի կատարելի մասին, խօսակցում է համարեա ոչինչ մանրամասնութիւն չը մտնալով:

Այս բոլորը այնքան բնական է այնտեղ, ուր ամեն մէկը ունի իր ցաւը և ուր այդ ցաւի մասին մտածելը մոռացնել է տալիս ամեն ինչ:

Սակայն, չը նայած այդ սրտաբացութեան, ոչ մի ահի, ոչ մի խօսք չէ լսի դուք «զարդունի» անուանված հիւանդութիւնների մասին: Ոչ մի տեղ դուք ծպուտ անգամ չէք լսի թէ այս ինչը վարակված է, օրինակ, սիֆիլիսով: Կարծէք այդ բերաւոր հիւանդների մէջ չը կան այդպիսիները, կարծէք այս կանանց և աղամարդկանց ահագին հասարակութեան մէջ չը կայ այդ կեղտոտ, վատ ախտերի մի կախի թոյնն անգամ:

Ճիշդ որ այդպէս է: Ձեզ բաւական է միայն նայել Պատիգորսկում ամառը բժշկութիւն տանող բժիշկների ցանկին: Նրանց սեռամասնութեան մասնագիտութիւնը «զարդունի», վեներական հիւանդութիւններն են: Եւ եթէ հետաքրքրվէք իմանալ այդ երեւոյթի պատճառը, ամեն մէկը կասէ ձեզ, որ Պատիգորսկում բժշկվող հազարաւոր հիւանդների 60—70 տոկոսը, գուցէ և էլ աւելին, վեներական ախտերով վարակվածներն են:

որ նրանք կազմում լինէին մի խիստ ցանց երկրի մէջ և կարողանային ոչ միայն փոխադարձաբար օգնել միմեանց, այլ և ոգեւորութիւն առաջ բերէին ընդարձակելու նրանց գործունէութիւնը:

Մեր գաւառների մի քանի կէտերում վերջին տարիներում կազմվեցին մի քանի կրեդիտային ընկերակցութիւններ, փոխառու խնայողական դրամաբերներ, հասարակական գրադարաններ և պէտք է ասած մի որոշ հետաքրքրութիւն դարձրին տեղական բանխմաց խաւերում: Սակայն եղած հիմարկութիւնների թիւը շատ քիչ է, իսկ կեանքի կարիքները կատարել են աւելի մեծ աշակցութեան և հասարակական հիմարկութիւնների աւելի բազմաթիւ գործունէութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԷԶՄԻԱՆԻ ՍԻՆՕՒԻ ՀՐԱՄԱՆԸ

Ահա այն հրամանը, որ արձակել է Էջմիածնի Սինօղը՝ ամուսնացողներից բժշկական վերականգնողական պահանջները մասին:

«Հրաման Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալին Ամենայն Ռուսաց Ի Լուսաւորչական Հայոց Մինօղի Սրբոյ Էջմիածնի»:

Լստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ի Սինօղի լուսնայնայնաբարութիւն թեմակալ առաջնորդին հայոց Աստուածային Ի 4 հոկտեմբերի տարւոյս թ. 154, որ ունի զայս օրինակ. «Երազմութիւն է արդէն, վերականգնողական անուանեալ հիւանդութիւնը ամենուրեք ծաւալ մեծ ընկալելով ի ժողովրդական մեր թէ ի քաղաքացի և թէ ի գիւղական անգամ թեմաւորին և քաղաքային գիւղերական և բարոյական կազմ կենաց և բարգաւաճ-

Բայց դա զգուշիւր է: Ուրիշ կերպ, ի հարկէ, չէ էլ կարող լինել: Եւ զգուշիւրը այն հոգը հովանաւորն է, որի թիկ տակ աճում են, տարածվում են այդ հիւանդութիւնները:

IV

Կայ, սակայն, այն հանգամանքը, որ հետաքրքրվողի համար կուրորտային կեանքը շատ էլ զարմանալի լինել չէ կարող:

Երկու ամառ եւ էլ ստիպված էի գիմել կովկասեան կարօրտների բուժիչ յատկութիւններին: Ռուսաստանի բոլոր կողմերից հաւաքվող բերաւոր բազմութիւնը, բնականաբար, պիտի գրաւէր իմ ամբողջ հետաքրքրութիւնը: Եւ գիտիտու, շատ բան հասկանալու. առանձնապէս նպատակով պայմաններ ինչ չէին պակասում:

Հայ բժիշկը, ինչպէս յայտնի է, մեծ մասամբ արհեստաւոր չէ, իր մասնագիտութեան մէջ կու գնացած անտարբեր չէ, այլ ունի հասարակական գործիչի ազնիւ բնազդը, որ միզանում շատ գեղեցիկ գործեր ունի կատարած: Ամառային երեկոյններին մեր ընկերական շրջանի խօսակցութիւնները տարական դարձաւ հասարակական հարցերն էին: Եւ ահա այդտեղ եւ իմացայ թէ ինչ գործուրիշի աւելումներ են կատարում կեանքի մէջ սիֆիլիսը, վեներական ախտերը: Սարսափալից, մաղբիւս փառաբան մի լսում էի ամբողջ հասարակութիւնների սիֆիլիսի մասին: Առանձին դէպքերի նկարագրութիւնները գալիս, միանում էին մի խելոյղ ամբողջութեան մէջ, որ ներկայացնում էր մի շարքով, փշովող մարդկութեան պատկերը: Տեղը, շրջապատը, կեանքի հանդէս բերող փաստերը այնպիսի ուժով էին ընդգծում այդ նկարագրութիւնները, այդ աւերիչ թոյնի ներկայութիւնը, որ մարդ ուզում է կանգնել, իր թոքերի ամբողջ ոյժով կանչել դէպի աշխարհի չորս կողմը, կանչել ամեն մի հասարակութեան տկանին: «Պաշտպանվեցէք, պահեցէք ձեռք ձերներին»:

Երբ ձեռք առնէ պատկերաւորում է այդ հիւանդութեանը զոհ գնացած մի մարդ, մի դժբախտ մարդ, որ վաճառվող սէր է վա-

၂၀၀၈

անձն-
այդ չը
դը ենք
արտա-
գրա-
մի մի
և բա-

կան տրամադրութիւններ, կան կենսական
գծեր, որոնք հետաքրքրում են նայողին: Դուք
որոնում էք ներքինը և կարող էք երկար
նայել: Միջակ է «վարացիներ» (219): Միւս-
ները գուցէ ինքն ըստ ինքեան իրականու-
թեան համապատասխան գործեր են, բայց
ընդհանուր գեղարուեստական հետաքրքրու-
թիւն չունեն:

Պոքորովիչը հին վարպետ է և նրա գործե-
րը յայտնի են թիֆլիսցիներին: Ինչ վերա-
բերում է Ֆրանկէին, նրա գործերը միջակ
արժանաւորութիւնից չեն բարձրանում:

Այսպէս է նկարչական ցուցահանդէսը:

ՆՅՈՒՅԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Թագաւոր Կայսրը, լուսաւորութեան միւս-
տրի օգնական Լուիլիանովի ամենապատակ-
գեղեցման հիման վրա, Բարձրագոյն բարե-
հաճեց հրամայել պարսկական կողմից բեր-
գաղի մայր Միրզա Իբրահիմ խանին, որ
կողմնակի ունկնդիր է խաղաղութեան
բժշկական մասում, ոչ իբր օրինակ այլոց,
հաշիւ նոյն համալսարանի՝ նոյն մասի իսկա-
կական ուսանող, առանց միջնակարգ դպրոցի
աւարտման վկայական պահանջելու:

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կոյ-
րերին խնամող հոգաբարձութեան կողմից
բաժնի վարչութիւնն իր վերջին նիստում
ընտրեց իր վարչութեան փոխ-նախագահ գե-
ներալ-լէյտենանտ Ե. Մ. Մալադային, Թիֆ-
լիսից մեկնելու պատճառով հրաժարված ին-
ֆանտերայի գեներալ Ա. Ա. Ֆրէդէի փո-
խարէն:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նորընտիր
քաղաքագլուխ Բ. Վերմիշնանը ամսին 6-ին
կը լինի քաղաքում, իսկ հետեւել օրը կը
մտնի իր պալատին մէջ: Բաղրային վարչու-
թեան ծառայողները կողմից կը դիմաւորէ մի
քանի խօսքով խորհրդի քարտուղար Չիչլանով
կամ նրան փոխարինող ծառայող Նիկոլաձէն:

Պաշտօնական տեղեկութիւնները հիման վրա
նոյեմբերի 26-ին Բազում խօսքով հիւան-
դացել են 3 հոգի (թուրքեր), մեռել են 2 հո-
գի, մէկը նախընթաց օրերի հիւանդներից:
Նախագահութեան հիւանդացի 1 ուսու, մեռել է
մէկ հին հիւանդ: 28-ին քաղաքում հիւան-
դացել են 1 թուրք և մի ուսու, մեռել են 3
հոգի հին հիւանդներից:

Պետերբուրգի երկուեւ-հաւատարմատար-
ները պատգամաւորութիւնը, որ պէտք է ներ-
կայացնէր նոյեմբերի 21-ին կայացրած որո-
շումը ներքին գործերի միւսնորին, վճռած է
եղել սպասել մինչև նոյեմբերի 29-ը, երբ Պե-
տերբուրգ պէտք է հասած լինէին Մոսկ-
վայի երկուեւ-հաւատարմատարների պատ-
գամաւորները: Այդ երկու պատգամաւորու-
թիւնները որոշել էին միասին ներկայանալ
ներքին գործերի միւսնորին և յայտնել իրանց
դատաւարի ընդունած ընդհանուր որոշումնե-
րը Դատաստանական Կանոնադրութիւնների
40-ամեայ տարեդարձի առթիւով:

Նոյեմբերի 25-ին, երկուշաբթի օրը 8 1/2-ին
արդարադատութեան միւսնորութեան մէջ հի-
ւանդութիւնից մի քանի ապաքինված պետական-
քարտուղար և արդարադատութեան միւսնոր
Մուրալիովը բաց արեց դատաստանական
պալատների աւագագոյն նախագահների և
պրօկուրորների խորհուրդը: Մասնակցողների
ընդհանուր թիւն է 36 հոգի: (ԲԵՇԵ)

Կերակի օրը, դեկտեմբերի 5-ին, Թիֆլիսի
Արտիստական ընկերութեան վերին դահլի-
ճում բժիշկ Ա. Սաախանը կարգաւոր է մի
հասարակական դասախօսութիւն, որի նիւթը
լինելու է «Գոյութեան կիւր ընդերքի և կեն-
դանիների մէջ»: Դասախօսութեան զուտ ար-
դիւնը նշանակված է ծեր և հիւանդ ուսուց-
չուհիների համար ապաստան հիմնելու վերին
աստիճանի համակրելի գործին: Այլի առաջ
ունենալով համակրելի նպատակը, դասախո-
սութեան նիւթի հետաքրքրութիւնը և դասա-
խօսի ցոյց տուած խօսքի ընդունակութիւնը
կարելի է յոյս ունենալ, որ դահլիճը լիք կը
լինի:

Ստաւրոպոլի քաղաքալուսը, «ՕՖՎ. ԲԱՅԿ.»
լրագրի ասելով, տեղական նահանգապետին մի
խնդիր է ուղարկել Ստաւրոպոլի նահանգում
զենամուօ մոցնելու վերաբերութեամբ: Մնչիրն

ուղարկված է նահանգապետին, որպէս զի նա
էլ ուղարկէ ներքին գործերի միւսնորին:

Թիֆլիսի նահանգական բժիշկ Տ. Ս. Կիկո-
ձէն քաղաքային բիւիական լաբորատորիան է
ուղարկել տեղական գործարաններում պատ-
րաստված մի քանի տեսակ արհեստական հան-
քային և մրդի ջրեր: Անցեալներում այդպիսի
ջրերի մէջ մանրագնդին հետազոտութիւնը
գտել էր պղնձի և օրգանական մարմինների
միացորդներ: Իսկ այժմ քաղաքային լաբորա-
տորիան արդէն հետազոտել և գտել է, որ
«կակազ» և Մադէրի գործարանների պողա-
ջերը կեղտոտ են պատրաստված: Այդ մասին
յայտնված է արդէն նահանգական բժիշկին, որ
պէս զի վերջինին էլ ձեռք առնէ հարկաւոր
միջոցները:

Լուսաւորութեան միւսնորութեան մէջ ներ-
կայուն ընկնում է ժողովրդական դպրոցների
ուսուցչներից և վարժուհիներից պարբերա-
բար ընդհանուր ժողովներ կամ համագումար-
ներ կատարելու հարցը: (Բ. Բ.)

Ստաւրոպոլում բացվում է ժողովրդական
ձրի գրադարան Ա. պ. Չիխովի յիշատակին:

«Тор. Пр. Газ.» լրագիրը լսել է, որ բոլոր
հեռագրիչների վրա մտադրութիւն կայ գնելու
5 կօպէկանոց մի նոր տուրը Կարմիր խաչի
օգուտին: Այդ նպատակով այժմ ամեն մի հեռա-
գրից վերցվող 15 կօպէկ անկողը դուռարը
պէտք է բարձրացվի 20 կօպէկին: Բացառու-
թիւն են կազմելու մեծ քաղաքներում արվող
քաղաքի միջի հեռագրիչները:

Օգնական դպրոցական շրջանի հոգաբարձուի
նախաձեռնութեամբ Սերասի նահանգում
հիմնվում է կանանց ուսուցչական սեմինարիա:
Բացի ընդհանուր առարկաներից, նրա ծրագրի
մէջ մտնում են—գիւղատնտեսութիւն, տնական
տնտեսութիւն, կարել, գործել և հիւսել:

«Р. С.»-ին հեռագրում են, որ ռուս կրի-
տասարգ գրողներ՝ Մաքսիմ Գորկի, Լէօնիդ
Անդրէեւի, Տան և ուրիշները մօտ ժամանակ-
ներս գնալու են Գոմէլ քաղաքը, ուր ընկնում
է ռուս ամբիւի կողմից արված յարձակման և
թալանի տիրաւոյակ գործը հրէաների վերա-
բերութեամբ:

«РԵՇԵ»-ը հաղորդում է, որ Պետերբուրգի
փաստաբանների մէջ լուր է պտտում, թէ մօտ
ապագայում Ռուսաստանի բոլոր փաստաբան-
ները ընդհանուր ժողով է տեղի ունենալու՝
այդ դատակարարի վերաբերեալ բազմաթիւ
հարցեր քննելու համար:

«Р. С.»-ին գրում են Պետերբուրգից, որ
մայրաքաղաք է վերադարձել ներքին գործերի
նախկին միւսնոր Վ. Կ. Պլէվէի օրով այն-
տեղից աքսորված Ն. Ա. Բուրակինը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ նոյեմբերի 25-ին Նորին Կայսերական Մե-
ծութիւնների ներկայանալու բաղդ է ունեցել
պարսից Շահի արտապարգ գեղական Միրզա-
Բեկ-Սանը, որը և յաճնել է Նորին Մեծու-
թեանը Շահի ինքնագիր նամակը: Նորին Կայ-
սերական Մեծութեան Թագուհի Կայսրուհուն
դիպարը պատու է ունեցել ներկայացնելու
մի թանգագին մետաղադրած ապարանջան, իսկ
Թագածուհուն ծնաբերվելի Սեփական պատ-
կերը, զարդարված բրիլանտներով: (Բ. Բ.)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՆԵՐԱՅԻ ՇՈՒՐՁԸ

Լուսեր Պորտ-Արտիքի մասին: Պարիզից հե-
ռագրում են, թէ նոյեմբերի 26-ին հրատա-
րակված լուսերի համաձայն, եւրոպական էս-
կազրան համաժողովի է Պորտ-Արտիքի առաջ:
Գինեքալ Ստեփանը մտադիր է, իրականակ
նաւերը բաց թողնէ ծովը, պահել նաւատոր-
նի և նաւատորմի միջոցները բերդի պաշտ-
պանութեան համար: (Բ. Բ.)

«Lok. Anz.» ասում է, թէ եւրոպացիներ
բոլոր ջանքերը այժմ ուղղված են Պորտ-
Արտիքի նաւահանգստում կանգնած ռուսա-
կան էսկազրան ոչնչացնելու: Տօկիօից եկած
հեռագրիչներին նայելով, լրագիրները այն
կարծիքն են յայտնում, որ ռուսաց էսկազրա-
յի հարուածումը եւրոպացիների համար աղոյ
է գնում: Նոյեմբերի 21-ին երկուշաբթի
խորտակվել են երկու կամ երեք նաւեր: Առ-

հասարակ եւրոպացիները համոզված են, թէ
ռուսաց նաւատորմը կամ պէտք է ծովը դուրս
գալ, կամ ոչնչանալ: (Բ. Բ.)

Ռուսական Գործարար Եճ ուղարկվելու Հե-
ռաւոր-Արտիքի: Արժանահաւատ աղբիւրից հա-
ղորդում են, որ առաջին հերթին կուղարկվեն
Հեռաւոր-Արտիքի զրահաւորներ «Գինեքալ-աղ-
միքալ Ապրակախ», «Ալմիքալ Սենեակով»,
«Ալմիքալ Ուլախով» և «Կայսր Նիկոլա I», կրէյ-
սէր «Վլադիմիր Մօսովախ» և թնդանօթա-
ձիգ նաւակ «Ներաբրին», մի հատ ականային
կրէյսէր, որը ներկայ քաղեւծ աւելի պատ-
րաստ կը լինի լողալու և 3—5 էսկազրային
ականանաւեր: Բոլոր այդ նաւերը, բացի ա-
կանային կրէյսէրից, կանգնած են այժմ Լի-
բավայում գրեթէ բոլորովին պատրաստի:
«Կայսր Նիկոլա I» նաւի արտիլերիան դեռ
նորերս փոխարինվել է բոլորովին նոր, կա-
տարեալ ժամանակակից արտիլերիայով: (ԲԵՇԵ)

Նեղուցների հարցը: Լուսերից հեռագրում
են, որ վերջին օրերը այդտեղ խօսակցութեան
նիւթ է դարձել ռուսաց սև ծովեան էսկազ-
րայի Դարբանէլից անցնելու հարցը. ամենը
այն յոյսն են տածում, թէ այդ բանը տեղի
չի ունենայ, բայց չեն ծածկում և այն հա-
մոզմունքը, թէ Անգլիան չէ կարող թոյլատրել
այդ Անգլիայի իրաւունքը՝ թոյլ չը տալ, որ
սև ծովեան էսկազրան անցնէ նեղուցներով,
նրանք հիմնում են Բելլինի դաշնագրի վրա,
որ վճել է փակել նեղուցները դաշնագրի
ստորագրող բոլոր մեծ պետութիւնների երաշ-
խաւորութեամբ: Նրանց կարծիքով, բաւական
է մի պետութեան անհամաձայնութիւնը դաշ-
նագրի փոփոխութեան մասին, որպէս զի նե-
ղուցները առ միշտ փակված մնան: Հաւա-
տացնում են, որ անգլիական կառավարու-
թիւնը չէ ծածկել իր հայեացքները այդ խնդրի
մասին հէնց պատերազմի սկզբում: Դալով
ռուս լրագիրները յօդուածներին, որոնք քնն-
նում են այն խնդիրը, թէ սև ծովեան էսկազ-
րան իրաւունք ունի անցնել նեղուցներով,
«Times» լրագիրը ասում է, որ դա ամենա-
վտանգաւոր իլլուրիա է: Անկասկած է, որ
Անգլիան չի համաձայնի շնչել նեղուցներով
անցնելու արգելիք, քանի որ այդ պահանջ-
վում է իր դաշնակիցի վրա յարձակելու նպա-
տակով: «Standard» լրագիրը մի առաջնորդող
յօդուածով այն կարծիքն է յայտնում, թէ
ռուս հրապարակախօսների հայեացքը նեղուց-
ների հարցի մասին համակրութիւն չի գտնի
ձեռնառն շրջանների կողմից, որոնք շատ լաւ
ձեռնօք են Անգլիայի այդ հարցի մասին ունեցած
վճռական հայեացքի հետ: Լրագիրը համա-
րում է նեղուցների դաշնագրի շնչումը
անօգտակար Ռուսաստանի համար, որովհետև
Սև ծովից պատերազմական նաւերի դուրս գա-
լու ազատութիւնը այն հետեւները կունենայ,
որ միւս պետութիւնների պատերազմական
նաւերն ևս ազատութիւն կունենան մտնելու:
(Բ. Բ.)

—Նորին հարցի, այն է սև-ծովեան էսկազ-
րայի նեղուցներից դուրս գալու հարցի մասին
ռուսաց «РԵՇԵ» լրագիրը հակառակ կարծիք է
յայտնում: Նա ընդգէմ է, որ այդ էսկազրան
դուրս գալ, որովհետև, ասում է նա, մեր նա-
ւատորմի կամ նրա մի մասի Սև ծովից դուրս
գալը տօնախմբութիւն կը լինի Թիւրքիայի
համար, անհանգստութեան օր սլաւեան եր-
կիրների համար և յաղթանակ այն պետու-
թիւնների համար, որոնք նպատակներ ունեն
Մերձաւոր Արեւելքում: Մեր նաւատորմը Սև
ծովում մի այնպիսի բան է, որ միշտ «մոռալ
սպանալիք» է պարունակում իր մէջ Մեր-
ձաւոր Արեւելքի այն մասին, որ թշնամաբար
է արամաւորված դէպի մեզ: Սև-ծովեան պատե-
րազմական նաւերի մի փոքր նաւատորմ
բոլորովին բաւական է իր նպատակի հա-
մար—փակել Բօսֆօրը և պաշտպանել ռուսա-
կան դիւանդի իշխելը: Դրա մէջ է նրա բա-
ղաբական կշիռը: Երբ նա գնայ, արդեօք ա-
մեն բան կը մնայ Մերձաւոր Արեւելքում իր
տեղը, առաջվայ նման, անփոփոխ: (Բ.)

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐԸ

1 դեկտեմբերի
ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ, 1 դեկտեմբերի: Այստեղ եկած
«Կապուլի» շրջանակից, որը նոյեմբերի 22-ին
գուրս է եկել Գրէֆտի ծովախորշից, հաղոր-
դում են, որ այդ օրը բալտիական էսկազրան
գտնվում էր վերոյիշեալ ծովախորշում:
ԼՕՆԴՈՆ, 1 դեկտեմբերի: Դայալի հերքում
է Կօպէնհագէնից «Մտանդարտ» լրագրին հա-
ղորդած տեղեկութիւնը իբր թէ Պորտ-Արտու-

րի մօտ սպանված ֆրանսիական և գերմանա-
կան ծովային գործակալների վերաբերմամբ:
Ֆէրրօլ, 1 դեկտեմբերի: Ռուսական ակա-
նահանգ, փոթորիկից խուսափելով, մտաւ նա-
ւահանգիստը: Նա ֆիստուներ ունի:

ՊԱՇԱՅԻՐ, 1 դեկտեմբերի: Բրիտանական
միստին հասաւ Բարուլ նոյեմբերի 29-ին:

ՍՐԻՍՏԻՆԻՍ, 1 դեկտեմբերի: Իրան, որը
վերջերս ուշաթափութիւնների էր ենթարկ-
ված, կատարեալապէս առողջացաւ:

ՎԻԵՆԱ, 1 դեկտեմբերի: Կայսրը մտաւ
ռուսական դեսպանատունը և կոմսուհու Կապ-
նիստին անձամբ ցաւակցութիւն յայտնեց
դեսպանի մահվան առթիւով:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՍ, 1 դեկտեմբերի: Դուռան
որոշեց հետեւել հեռագրին ուղարկել արդա-
բադատութեան միւսնորին: «Ձերդ բարձր
գերազանցութիւն, այս օրերս լրացաւ դա-
տաստանական օրէնսդրութիւնների 40 տարին:
Դիմելով ձեզ, որպէս արդարադատութեան գե-
րագոյն դեկլարին, եկատերիսօւլովի քաղա-
քային դուռան շնոր բարեմաղթութիւններից է
անում, որպէս զէ 1864 թվ. դատաստանական
օրէնսդրութիւնների յայտարարած և համա-
րեալ յաջորդ օրէնսդրութիւններով վերացված
մեծ և պայծառ սկզբունքները վերականգնվին
այն սկզբունքան ձևով, որպէս յօրինել և
կեանքի մէջ էին մտցնել նրանց անմոռանելի
ներշնչողները և ստեղծագործողները»:

2 դեկտեմբերի
ՄՈՒԿԻՆԵ: (Սեփ. թղթ.): Եւրոպացիներ
բեռնակիր նաւերը շարունակում են գալ Ին-
կուս: Այդ քաղաքը ենթարկված է ծանր հաւ-
կերի, որոնք գրված են մինչև անգամ պա-
տուհանների վրա: Չինական առեւտրականնե-
րը շատ պոլմ են վերջացնել իրանց գործերը և
տեղափոխվել դէպի հիւսիսային Մանչուրիա:
Սոնիսուգները գլխաւորները հաւատացնում
են, որ Լեւոսի գետի հովտում նրանց թիւը
հասնում է 10,000-ի. նրանց հրամանատարը
հապօնական օֆիցեր է: Սոնիսուգների գլու-
խաւորը կայսրուհու սիրելին է:—Տեանձինում
օտարերկրեայ օֆիցերները հիւանում են Պորտ-
Արտուրի դիմացկանութեան վրա և միայն
տարակուսներ են յայտնում «Բաստարօպի»
ականանաւի պաշկուցման պատճառի առի-
թով. այդ ականանաւը ազատ էլը ունէր դէպի
ծովը մի օր ու գէշերովայ ընթացքում:

ԴԱՅՁԵԱՊՈԼԻՍ: (Սեփ. թղթ.): Դեկտեմբերի
1-ին մի փոքրիկ զիւր, վերաբեան գնդի
բանակաւորը, վկայ եղաւ գէօրացեան մեծ զօ-
րանադէսի: Հանդէսը վերջացաւ ընծաների
բաժանմամբ գէօրեան խաչի առպաններին
ռուս ազնուականութեան կողմից, որ այնքան
դիրաւագաց է հայրենիքի կեանքի վերաբեր-
մամբ և ջերմ սիրով օգնութեան է հասնում
նրան:

ՄՕՍԿՎԱ: Կոմսուհի Կոմարովսկայա պատ-
մում է, որ այժմ Սարաիում կան 22 հիւան-
դանոցներ. իւրաքանչիւրը նրանցից բաղկա-
ցած է չորս փայտաշէն տներից, որոնք զետե-
ղում են իրանց մէջ 180 մահճակալներ և օֆի-
ցերական մի առանձին բաժանունը: Իւրա-
քանչիւր տան մէջ իրանց ոյժերից բարձր
աշխատանք են կատարում գլխութեան երկու
բոլոր: Հիւանդանոցները լիքն են հիւանդնե-
րով չափից աւելի:

ՄԻԴԻԻԻ: Դեկտ. 1-ին: (Հաւաք գործ.):
Միւսնորութիւնն իր ամբողջ կազմով հրաժա-
թարական տուեց:

ՍՈՒՄԵՆԻ: Դեկտ. 2-ին: (Սեփ. թղթ.):
Դիւրեւում խաղաղութիւն է տիրում. ցուրտը
հասնում է 20 աստիճանի ըստ Բեօմբերի:
Ձմեռը, հաւանականօրէն, կատարի կը լինի:
Չօրքին մատակարարվում է այժմ մեծ քանա-
կութեամբ ածուխ:

ՄԻԵՆ: Դեկտ. 1-ին: (ԲՆՅՈՒ. գործ.): Փալ-
կերգածի նաւաբաժինը կը մնայ Ջիբուտիում
մինչև նաւատորմի մնացած մասի գալուստը:

ԱՐԵՎԵԼ: Դեկտ. 1-ին: «ԼՂՂ» հաղորդում է,
որ ռուսական «Գրօզնի» ականանաւը հասաւ
Պիրէյ:

ԿԱՆԵԱ: Դեկտ. 1-ին: (ԲՆՅՈՒ. գործ.): Բալ-
տիական նաւատորմի կազմին պատկանող ե-
րեք շրջանակեր հասան Կանէ:

ՏՕԿԻՕ: Դեկտ. 1-ին: (ԲՆՅՈՒ. գործ.): Տօգօ
հաղորդում է, որ եւրոպական ականանաւերը
մի շարք յարձակումներ գործեցին «Սեփաստ-
ալօ» զրահակրի վրա մինչև երկուշաբթի կէս-
գիշերը, նոյեմբերի 29-ին: Ռուսները բաջու-
թեամբ դիմաւորում էին: Պայթած ականաների
հետեւները յայտնի է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը շնորհեց
11-դ արեւելեան սիբիրեան հրացանաձիգ գնդի
բահանայ Ստեփան Ելեբեկովիկուն, ուշա-
գրութեան առնելով նրա բաջութիւնը և ան-

